Հավելված N 538
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

## 1. Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմավարական ոլորտների վարչության (այսուհետ՝ Վարչություն) ծանր արդյունաբերության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-32.25-Ղ4-1)

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

**1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ**

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

**1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

**1.5. Աշխատավայրը**

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

1. ապահովում է ծանր արդյունաբերության ոլորտում տիրող վիճակի մոնիթորինգի իրականացման աշխատանքները.
2. ապահովում է ծանր արդյունաբերության քաղաքականության մշակման աշխատանքները.
3. ապահովում է ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման մշակման աշխատանքները.
4. ապահովում է ծանր արդյունաբերության մեջ ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքները.

5. ապահովում է ծանր արդյունաբերության զարգացման խոչընդոտների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

6. ապահովում է ծանր արդյունաբերական ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների առկա տեխնոլոգիական մակարդակի գնահատման համար առաջարկությունների մշակման աշխատանքները.

7. ապահովում է քիմիական արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակման աշխատանքները.

8. ապահովում է քիմիական արդյունաբերության քաղաքականության մշակումը.

9. ապահովում է քիմիական արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները.

10. ապահովում է մասնակցությունը քիմիական արդյունաբերության ոլորտներում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմների, ուղղությունների և գործողությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին.

11. ապահովում է քիմիական արդյունաբերության ոլորտներում տիրող վիճակի մոնիթորինգի իրականացման աշխատանքները.

12. ապահովում է ոլորտներում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

13. ապահովում է քիմիական արդյունաբերության ոլորտներում ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքները.

14. ապահովում է նախկինում քիմիական արտադրություն իրականացնող և ներկայումս չգործող կամ մասնակի գործող ընկերությունների վիճակի ուսումնասիրման ու գնատատման, ինչպես նաև դրանց վերագործարկման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքները.

15. ապահովում է մասնակցությունը ԵԱՏՄ շրջանակներում ոլորտային համագործակցության զարգացման ու խորացման աշխատանքներին.

16. ապահովում է մասնակցությունը տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակման իրականացման աշխատանքներին, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին:

**Իրավունքները՝**

- համագործակցել համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ ծանր և քիմիական արդյունաբերության քաղաքականության մշակման և միջնաժամկետ վերանայման աշխատանքների շրջանակում.
- տնօրինել համապատասխան մարմիններից ծանր և քիմիական արդյունաբերության

ոլորտների ռազմավարական փաստաթղթերի ու իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ.

• ստանալ ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններից անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն.

• մասնակցել Նախարարության տարբեր ստորաբաժանումների և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների հետ ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներում ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների լուծման համար աշխատանքային քննարկումներին.

• տնօրինել զարգացած և զարգացող երկրների ծանր և քիմիական արդյունաբերության քաղաքականության և ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ շահագրգիռներ մարմիններից անհրաժեշտ տեղեկատվությունը.

• մասնակցել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներին առնչվող հարցերի քննարկման համար համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներին.

• ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներին առնչվող հարցերի պարզաբանումներ և բացատրություններ.

• պահանջել շահագրգիռ մարմիններից ամբողջական տեղեկատվական փաթեթ ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների ներդրումային միջոցառումներին և համաժողովներին մասնակցելու համար.

• ստանալ դիվանագիտական կապուղիներով արտասահմանյան երկրներից տեղեկատվություն ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների քաղաքականությունների, ներդրումների ներգրավման, ներդրումների պաշտպանության համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ:

**Պարտականությունները՝**

• համակարգել ծանր և քիմիական արդյունաբերության մեջ, ծանր արդյունաբերության ոլորտում ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակման, համապատասխան իրավական ակտերի և դրանց նախագծերի մշակման համար անհրաժեշտ աշխատանքները, համագործակցելով շահագրգիռ մարմինների հետ.

• հսկել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների քաղաքականության մշակման և դիտանցման, անհրաժեշտ վերլուծությունների կատարման, համապատասխան առաջարկությունների նախագծերի մշակման աշխատանքները.

• հսկել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների առնչվող իրավական ակտերի վերաբերյալ, ինչպես նաև նախագծերի մշակման համար առաջարկների ներկայացման աշխատանքների կատարման ընթացքը.

• համակարգել համապատասխան մարմինների կամ անհատների կողմից ներկայացված հարցադրումներին ընթացք տալու աշխատանքների իրականացումը.

• ամփոփել իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացություններ նախապատրաստելու, ինչպես նաև մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման իրականացման աշխատանքները.

• հսկել ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտների ֆորումների, համաժողովների խորհրդակցությունների կազմակերպման աշխատանքները.

• ամփոփել և ներկայացնել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և ընթացք տալ այլ գրությունների նախագծերը:

## 3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

**3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

**3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

**3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

**3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

**Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում,
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

## 4. Կազմակերպական շրջանակը

**4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կամում գործող կառուցվաքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

**4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կամում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման

շրջանակներում:

**4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

**4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ իր իրավասությունների շրջանակներում:

**4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: